



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՄԱՐԶԱԳԻՄԱՆՍԻ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 77

11 ՅՈՒՆԻՍԻՐ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ





ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԱԹԱԵՐԹ

Երևոյի տարի Թ 11 Յունուար 1913 Թիւ 77

«Սրբազան Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Աւճազանց շաբաթաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Սրբազան Հայրն արտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Համակ Կարգ. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս ԺԳ. Թերզեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Ալիկիոյ,
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քաւ անամարաւ:

ՏԵՐ ԿՈՍԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՏԱԿ

Է

Ե Պ Ա Ր Ք Ո Ս Ա Ր Ա Ն

(Շար.)

Արդ Տէր Կոստաս՝ յիշեալ բանտին մէջ մանեկուն՝ հոն եղողներուն համար մը-խիթարիչ հրեշտակ մը եղաւ, եւ իւր հրապուրիչ խօսքերով եւ պերճախօսութեամբ զանոնք կը քաջալերէր եւ կը խրախուսէր չվախնալ առժամանակեայ մահէն՝ Ս. Գրոց խօսքերով: Ասոնց մէջ էր նաեւ վերոյիշեալ Մատթէոս Պատրիարքը, որ նոյն օր Եպարքոսին կողմանէ դատարան կանչուողներու

մէջ առաջինը եղաւ: Եպարքոսն խօսքը Մատթէոս Պատրիարքին ուղղելով հարցուց. «Զքեզ ո՞վ Պատրիարք ըրաւ:» Մատթէոս մասնակցելով իւր կրօնակիցները պատասխանեց. «Ինծի հետ բանտի մէջ եղող եօթը նշանաւոր անձինք:» Եպարքոսը՝ յիշեալ մեծամեծները յականդէ անուանէ աւելի ճշդելու նպատակաւ ուղեց որ Մատթէոսը զանոնք անձամբ մի առ մի ցոյց տայ, եւ նա առաջնորդուած պաշտօնեային զանոնք ցոյց տուաւ: Հետեւաբար Եպարքոսին առջեւ բերուեցան այն եօթն մեծամեծք եւ Եպարքոսը հարցուց անոնց ըսելով. «Մատթէոսը կրք Պատրիարք ըրիք, Աւետիքը ի՞նչ ըրիք»: Անոնք պատասխանեցին. «Քու նախորդ գանձի դատելով աքսորք զրկեց:» Ասոր վրայ Եպարքոսը զայրանալով հրամայեց որ ամենուն ալ զըլուխը կտրուի: Աւա՛ղ, ասոնք տկար գլուխուկով Ս. Հաւատքին ուրացան մահուան

հանդէպ, նա մանաւանդ ամենաչար օրինակ տուողը Մատթէոս Պատրիարքն եղաւ որ մոռցած Արքայութեան սէրը, դժոխաց վախը, չմտաբերելով քահանայութեան, վարդապետութեան, եպիսկոպոսութեան Ս. Կարգը եւ Կաթողիկոսութեան արժանապատուութիւնը, եղկելին ուրացաւ յայտնապէս ՂԲՐԻՍՏՈՍ, իւր Փրկիչը, եւ գլխուն վրայ կրած կնիգուղը գետին զարկաւ, վրան կտիւց եւ եղաւ Մահ մէտական: Սակայն ապա զղջացաւ եւ Հրեո՞ւմ փախչելով Կղեմէս ԺԱ. Ս. Քահանայապետի՝ Քրիստոսի Փոխանորդին առջեւ խնարհելով հաւատոյ դաւանութիւնը կատարելէ զկնի, կեանքը բարի մահուամբ կնքեց: (Հ. Մատթ. Վենետիկ, Մխիթ. պատմագիր:)

Ասոնցմէ վերջ երբ դատարան տարուեցաւ Տէր Կոմիտաս, հոն ներկայ գտաւ իրեն մատնիչ քահանայները եւ Յովհաննէս Պատրիարքը. որոնք երեք հարիւրէ աւելի ստորին դասակարգէ մարդիկ ժողովելով հոն եկած կ'սպասէին: Տիրահոչակ Պատրիարքը նախապէս պատրաստած կարգ մը զրպարտութեանց մի տեղեկագիր մատուցանելով Եպարքոսին, կ'ամբաստանէր զՏէր Կոմիտաս իբրեւ թէ ըլլար նա լրտես մը, Տէրութեան մատնիչ մը, խռովարար մը, ի մի բան յիշատակար Հայ ժողովրդեան եւ հասարակութեան: Տեղեկագիրը կարդացուեցաւ յստակ առողջանութեամբ ատենադպիրի մը կողմանէ: Որոյ բովանդակութիւնը ամիսփելով կ'արձանագրենք հոս.

«Որովհետեւ մեր ազգէն ոմանք Ֆրանկի կրօնքին յարելով, մեր հօրենական կրօնքին դէմ կը հակառակին, եւ Ֆրանկաց ազգը նախամեծար համարելով, կը Ֆրանկանան եւ այնու կ'ապստամբին Ձեր Տէրութենէ, ու նաեւ բոլոր մեր պաշտօնի ժողովուրդը նոյն ապստամբութեան առաջնորդել կը ճգնին. եւ որովհետեւ ասոնց մէջ Տէր Կոմիտաս քահանայն գլխաւոր գործող մըն է, որ տոյն այս ընթացքով մեր ազգին մէջ երկպառակութեան որմներ կը ցանէ ու կը խռովէ. որոյ դէմ եթէ յառաջուց Ձեր Մեծութեան բարձրագոյն իշխանութեան կողմանէ ազգու նախազգուշութիւններ ու միջոցներ ձեռք չառնուին, մեծ վտանգ կայ որ քիչ ժամանակուան մէջ բովանդակ Հայ Ազգը Ծրանկաց ազգին յարելով Ձեր միահեծան թագաւորութեան մէջ ներքին թշնամիներ

պիտի հանդիսանան: Ոյր վասն ահաւասիկ մենք, Ձեր ծառաները, կը բողոքենք այնպիսիներու դէմ: Ձեր Վսեմութեան առջեւ, որպէս զի հանդարտեցնէք մեր ազգը, մէջտեղէն վերցնելով այսպիսիները, եւ մեր բովանդակ ազգը մտադիր ըլլայ խաղաղութեամբ հպատակելու Տէրութեանդ հրամանաց:»

Պահ մը ատենանը սարսափած լուռ մնաց. դատարանի անդամք շարուած էին Եպարքոսին շուրջը, որ Թագաւորին երկրորդն էր, եւ լուրջ հայեացքներ կ'արձակէին ձեռքերը կտուէն շղթայակալ եւ ի միջաւայրի յոռու կայս անայլայլ դէմքով կեցող քահանային վրայ: Երբ ընթերցումը աւարտեցաւ, ներքին զգացումով մը իբրեւ թէ մեքենայէ մը շարժած ամէնքը մէկէն մօրուքնին ատկերուն մէջ ամիսփելով խորհիլ սկսան. խնդիրը պարզ ոճրագործութեան, մարդասպանութեան վրայ չէր որ կը դառնար, այլ իրենց անծանօթ կրօնքի մը, զոր բնաւ իրենցմէ եւ ո'չ մէն ուսումնասիրած չէր. մատնիչք կամ ամբաստանողները՝ նոյն իսկ ամբաստանեալին կրօնակիցներն եւ դասակիցներն էին. իսկ իրենք զամենքն ալ կ'ատէին որովհետեւ իրենց կրօնքին չէին պատկանէր, այնու հանդերձ, իբրեւ շէրի շէրիֆին, արդարութեան օրինաց զործագրութեան պաշտօնեայններ հոն նստած էին գիտութեամբ եւ կամ լաւ եւս տգիտութեամբ, գիտունի, օրէնսգէտի գեր խաղաղու: Ընդհանուր տիրող լուծութիւնը խզեց Եպարքոսը, որ ընթերցման ժամանակ մտացր բովանդակ կարողութիւնը ի մի ամփոփելով, եղած ամբաստանութեան մէջ մեծ կիրք մը նշմարած էր, ատելութեան խնդիր էր, արդարութեան հակառակ էր, անդիմութիւն էր, բացարձակ բարբարոսութիւն էր. հետեւաբար խնդիրը իւր ջղայնութիւնը զըրգրուեց, խղճին դպաւ: Եթէ դատաւորի պատասխանատուութիւնը չունենար, եւ աշխարհի Աստուածը եղող արժաթաիրութեան թելերուն չզպչէր, այնքան հոգ չպիտի ընէր, թո՛ղ կեալուէին մէկը պակաս ըլլայ ըսելով, վայրկեանական վճիռով դատը պիտի փակէր: Բայց այնպէս չեղաւ. ինք՝ ո՞ր ազգեցութեամբ չգիտեմք, սակայն ստույգ է որ վերին, գերբնական մէկ ազգեցութեամբ աւելի գթասիրտ երեւցաւ քան զՊատրիարքը եւ

Քահանայները: Կշռեց զիրքին ծանրութիւնը, Պիղատոսին պէս. ունէր խիզճ մը իբրեւ մարդ, որ անիրաւութեան դէմ անդադար կը բողոքէ եւ չճնշուիր եւ ոչ մէկ բանով. ունէր խիզճ մըն ալ որ երկիւղ կ'ազդէր, մի' գուցէ այն ամբոխին՝ մանաւանդ Եկեղեցական դասուն կամքը չկատարելով, իր անձին դէմ բողոքի առիթ տրուի եւ կորսնցնէ խայտառակութեամբ այն փառաւոր զիրքը զոր մեծ գնով ստացած էր: Ուստի Այլ բաշան այսպէս երկու սուրի մէջ մնացած, այն նեղ վայրկեաններու մէջ ելքի ճամբայ մը կը խորհէր: Ժամանակ վատակելու եւ կամ առիթ մը որսալու նպատակաւ, Պատրիարքին դառնալով հարցուց. «Ճշմարիտ են այդ ըսուածները»: պատասխանեց Պատրիարքը «Այո՛ ճշմարիտ են»: եւ նոյնը կրկնեցին միւս Քահանայները: Իսկ ժողովուրդը միաբերան ազազակեցին. «Աւերցուր ասիկայ մեր ազգին մէջէն»: Այն ատեն Եպարքոսը աչուքները սեղմեց եւ իր մէջ վեր ի վերոյ եզրակացութեան մը յանգելով խօսքը ուղղեց Տէր Կոմիտաս Քահանային ի հարցաքննութիւն՝ բայց քաղցր ձեւով մը «Բարա՛ս, դուն ալ խօսէ՛ նայինք, եւ պատասխան տուր քեզի դէմ եղած ամբաստանութեանց» ըսաւ:

(Շարունակելի)

ՆՈՐ ՏՈՄԱՐ

Ըսին. «Նոր տոմարը ի Պոլիս հայ-կաթողիկէ հասարակութեան մէջ մեզմեկու ժամանակը չէր».— Այո՛, քան զի շատոնց անցած էր այդ ժամանակը՝ 1. շուրջ 350 տարիներէ ի վեր, երբ Գրիգորեան Տոմարը, իր ուղիղ ըլլալուն համար, ընդունուեցաւ, ի բաց թողւով Յուլեան տոմարը, որ սխալ էր. 2. անցած է ժամանակը, քանի որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհ, նաեւ Բողոքականք, զայն ընդունած են շատոնց. 3. յիշաւ անցած էր ժամանակը, եւ ամօթապարտ կը մնայինք արեւելեան բոլոր կաթողիկէ ուրիշ ազգաց

առջեւ, Ասորի, Քաղղէացի, Մարոնի, Մելքիդ, Ղպտի, եւն., որոնք ի սկզբանէ անտի զայն ընդունած էին, իրր որոշիչ նշան կաթողիկէութեան. 4. ո՛հ, Պոլսոյ համար ո՛րչա՛փ անցած էր ժամանակը քանի որ շատոնց նոր տոմարով կը վարուէին հայ-կաթողիկէ տամուկեց թեմերու ՏԱՄՆՈՒՄԷԿԸ. նայեցէ՛ք ի՛նչ թիւ եւ ի՛նչ համեմատութիւն. յաւե՛լ նաեւ երկու Մխիթարեան Միաբանութիւնները, եւ արտասահման բոլոր հայ կաթողիկէայքը. բաց ի Ռուսիոյ: Ուստի, այո՛, պէտք է խոստովանիլ թէ ժամանակը անցած ըլլալուն համար, այլ եւս հարկ էր անյապաղ ընդունել զայն:

Ըսին. «սխալ հասկցար, մա՛րդ Ասուծոյ. «ժամանակը չէր» կ'ըսեմք մե, կ'ուզեմք ըսել քե՛՛ «դեռ չէր եկած»: — !!! ... Անցածը ինչպէ՛ս կրնայ չեկած ըլլալ. անցած ըլլալուն կարկառուն եւ ծանր փաստերէն ուրեմն չջախջախեցա՛ք. դո՛ւք, ո՛վ մայրաքաղաքացիք, աշխարհաքաղաքացիք, համալսարանականք, զուք՝ որ զառաւացիին համար սարտոնիկեան քմծիծաղ մը փրթթեցնելու յատուկ ձիրքն ունիք դուք՝ որ այլոց վրայ քանի մը տասնեակ մեթր բարձրէն կը նայիք՝ եթէ ոչ սաւառնակէն, դո՛ւք կ'ըսէք այսքան ծանր սխալը, անուղիղը շտկելու ժամանակը չեկած կրնայ ըլլալ երբեք. ա՛յ ըսելը՝ նոր անքաւելի սխալ մը չէ՞: Ըսէ՛ք, խնդրեմ, ե՛րբ պիտի վար այդ օրհնեալ ժամանակը...??? — պապանձումն Զաքարիայի՛... Թօթուեցին գլուխնքն եւ՝

Ըսին. «Երբ ոուսը, յոյնը, էջմիածնական հայն ընդունին»: — Հա՛... բայց ինչո՞ւ ասոնց կապուիլ սխալ մը չոյելով, քան չհետեւիլ կաթողիկէ Իտալիոյ, Գաղղիոյ, Սպանիոյ, Աւստրիոյ, Պելժիոյ, կաթող. եւ բողոք. Անգղիոյ, Գերմանիոյ, Զուիցերիոյ, Հոլանտայի, Տանիմարքայի, Սկանտինաւեանց, Ամերիկաներու, Աւստրալիոյ, եւն. եւն. մանաւանդ որ Թուրքիան իսկ, իսլամական պաշտօնական կրօնքով տէրութիւն մը, վիճարանեցաւ ասոր վրայ եւ ի մօտոյ ընդունելու վճիռ տուաւ Երեւակոյտին մէջ, եւ՝

իբր նախընթաց քայլ մը, ընդունեցաւ նոր ժամացոյցը, կամ եւրոպականը (միջօրէականը): Ինչո՞ւ հայ եւ յոյն հեռեփոխաց սխալին գերի ըլլալ. ասոր մէջ անպատճառ մասնաւոր պիտո՞ւմ մը՝ յետին մտածում մը ունիք, անշուշտ!... Մանաւանդ գիտէք արդեօք ի՞նչ պատասխան տուաւ Ռուսիոյ Կայսրը՝ այն պատուիրակութեան որ Եւրոպիոյ գիտնականաց կողմանէ գնացած էր իրեն առաջարկելու համար թէ այլեւս ներմուծէ Նոր Տոմարն ի Ռուսաստան. նա ըսաւ. «Պարոնայք. մի՛ աշխատիք զիս համոզելու, զի Զեզի չափ ես ալ վերահասու եմ թէ Գրիգորեան Տոմարը ուղիղ է, օգտակար է ժողովրդեան» քաղաքակիրթ աշխարհի հետ պիտական, արուեստական, վաճառականական են. յարաբերութեանց համար. եւ թէ մեր զայն չընդունիր կերպով մը բարբարոսութիւն է. եւ ես՝ ամենայն Ռուսոյ Կայսր, այս ուղիղ բարեկարգութիւնը վայրկեան մը իսկ չյապաղելով կը փափաքեմ ներմուծել Պայսրութեանս բովանդակ տարածութեանը մէջ: Սակայն, կայ դժուարութիւն մը միայն, եւ է՝ որ, եթէ ես ներմուծեմ զայն, Յունաց Պատրիարքը որուն հետ կրօնական կապ մը ունինք, զմեզ Ռուսերս հերձուածող պիտի համարի. քան զի նա նոր տոմարը չընդունելու գեռ կը յամառի»: Կ'երեւի թէ այս վերջին բայով՝ որուն վրայ շեշտեց, Կայսրը ակնարկել ուզեց Հռոմէ բխած ուղղութիւն մը ամեն գնով չընդունելու՝ յունական երդուեալ յամառութեան... Timeo Danaos, graeca fides... Բայց մենք, բացառիկ չորհրդին Ատուծոյ Կաթողիկեայքս, մենք փա՞ռք Ատուծոյ այսպիսի կաշկանդումներ բնաւ չունինք... Ուրիմն:

Ըսին. «Դու չես գիտեր, եւ ոչ խորհել իսկ... Մեր հասարակութիւնը փոքրաքիւ է, իսկ հեռեփոխացը (մեզայ՝ հերձուածողացը, կամ լաւ եւս՝ Յունաց եւ Հայոցը... (այսպէս) բազմաքիւ. ուսի անոնց տոներուն, մեք անգործ պիտի մնանք, իսկ մեր տոներուն՝ մեք պիտի չկարենանք շահիլ: Ասոր ալ պատասխանե՛ք՝ նայինք, հե՛ք»: — Եղբայր, պատասխանեմ. բայց չիտակն ըսելու հա-

մար, ես կը սկսիմ տարակուսելու ոչ միայն ձեր Կաթողիկէութեան, այլ նաեւ ձեր մտահաս, խոհուն, արամբարան մարդիկ ըլլալուն վրայ ալ: Եւ ինչո՞ւ, տեսէ՛ք. «Մեր տօներուն օրերը պիտի չկարենանք շահիլ» ըսելը, Գրիգորեան վայել խօսք մը չէ. պիտի ըսուի ձեզ՝ Հարկա՛ւ. տօնը ինքնին կը նշանակէ դադարումն նիւթական գործոց եւ շահու ապահովելու համար հոգեւորական գործն ու շահը. ասիկա պարտք մըն է եւ եկեղեցւոյ Պատրիարքներէն մին: Իսկ միւսը չեմ հասկընար լնաւ. ի՞նչ ըսել է՝ «հեռեփոխաց տօներուն մեք անգործ պիտի մնանք». անոնք կը բանային ձեր խանութները. կամ թէ հարկեր տարի ետ կ'երթաք կոր կամ հարկեր տարի քնացա՞ք, որ կը կարծէք թէ դեռ եւս հսկաքական գրութիւնը գոյութիւն ունենայ. ո՛չ, սիրելի ան վերցած է. հիմա ամէն մարդ ազատ է ուզած օր իր գործին երթալու, իր խանութը բանալու: Մանաւանդ ձեր ըսածին բոլորովին հակառակն է. այն բաժանեալ հասարակութեանց տօնի օրերը աւելի պիտի շահիք դուք, մինակ ըլլալով գործելու եւ առուծախի: Իսկ եթէ բացառաբար մէկը կամ ոմանք այնպիսի գործ մը ունենան որ անոնց հետ կապուած ըլլայ, եւնայնպիսին կը դիմէ իւր խոստովանա՜ծօր, ինչդիրը կը պարզէ եւ հրաման կ'առնու ըստ պատշաճին, ճիշդ ինչպէս որ պահքի եւ ծովի եւ կիրակի օր գործելու հրաման կ'առնուի առ օրինաւոր պատճառաց: — Իսկ ձեր առարկութիւնը ես բոլորովին ջուրը ձգելու ուրիշ զօրաւոր փաստ մըն ալ ունիմ. ըսէ՛ք ինձի, էֆէնդիներ. գաւառներու մէջ հայ կաթողիկեայք որ անհամեմատաբար նուազագոյն են քան բաժանեալ հասարակութիւնքը ինչպէս Մալաթիա, Խարբութ, Տ. Կերտ, Ատանա, Եգեւսիա, Պրուսա, եւն. եւն. տարիներէ եւ տարիներէ ի վեր ի՞նչ կ'ընեն. ըսէ՛ք, հոս, ի Պոլիս, ձեր աչքին առջեւ, լատինածէս Եւրոպացիք եւ արեւելածէս միւս հասարակութիւնք ի՞նչպէս կ'ընեն նոր տօմարով... ըսէ՛ք!... Նորէն պապանձումն: Բայց վերջապէս պէտք է բան մը ըսել, եւ՝

Ըսին. «Դոնե՛ պե՛տք է խոստովանիս որ այս

խոռովութեան պահումն անխոհեմութիւն եր
Նոր Տումարը հրատարակել: Եւ ալ կ'ըսեմ
թէ շատ մեծ խոհեմութիւն եղաւ. եւ ար-
դիւնքը դայս ցոյց տուաւ: Ժողովուրդը ա-
հագին մեծամասնութեամբ, խնդագին վերա-
բերումով եւ գոհութեամբ ընդունեցաւ զայն.
հակառակ իրենց խանգարիչ ճիգերուն եւ հա-
կառակ Մէծմուշակեան ծանօթ խոշոր եւ վա-
ստիճակաւ, տօնի օրերը եկեղեցիները լե-
ցուն են հաւատացեալներով: Այնուհետեւ,
օտմ. կառավարութիւնն ալ ըսաւ թէ՝ կրօ-
նական իշխանութիւնը իր իրաւանց մէջ է
հրատարակելով նոր տոմարը եւ ոչ ոք կրնայ
իրաւունք ունենալ հաւատացեալները խա-
փանելու անոր հետեւէն... եւ վիժեցան
խոռովարարներուն սրբապիղծ ձեռնարկներն
ու փորձերը. անխոհեմութիւն՝ իւր սարօքն,
ճիշդ իրենց քով եղաւ. եւ ահա Աստուած
այնպէս ուղեց որ այս նոր տոմարը ի-
րենց նուաստացումն եւ իրենց կողմնակ-
ցաց քով բաժանումն ծառայեց: Եւ արդէն,
խնդրեմ հաճէիք ըսել, որ ընդհանրական
վարչութիւնն է որ ոմանց հակառակութեան
համար կը գաղթի իր գործունէութենէն.
մարմնոյ պզտիկ կոտոր մը վիրաւորուած ըլ-
լալուն համար, ըղեղն ու սիրտը չեն գաղ-
թի գործելէ եւ գործարանները միշտ կեն-
սունակ նորոգութեան ենթակայ են: Արդէն
այդ ափ մը հակառակորդը եւ ոչ իրաւունք
ունին ըստ ինքեան խօսելու. զի հեթանա-
ծող են եւ բանադրեալ: Բայց յոխորտալով՝

Ըսին. «Հապա ՀԱՅ արարողութիւնը...
Լասին կ'ըլլանք կոր»:—Ո՛վ հին փիլիսոփայ,
երանի՛ թէ՛ բնաւ ըսած չըլլայիր թէ՛՝ «Անմեռ-
քիւն ճնանի զսխմարութիւն կամ զչարութիւն»:
Էֆէսոսիներ, խնայեցէ՛ք ձեզի, խնայեցէ՛ք ձեր
ու ձեր Դարպասին համբաւոյն. խնայեցէ՛ք
որովհետեւ դեռ զձեզ դիտուն կամ բարձ-
կարծողներ կրնան ըլլալ: Նախ հարցնեմ ձե-
ծի. այս ձեր ոմանց գլուխը տեսնուած ռաբ-
կաները, այդ շիֆ վզնոցները, փողկապները
եւն. , հայ ծէսին կը վնասեն կոր. ձեր
խօսած գաղղիներէն, ուրիշ լեզուները, ձեր
նոր տոմարով բռնած կրկնատոմարները, Եւ-
րոպայի հետ ձեր նոր տոմարով գործառնու-

թիւնները, եւրոպական բոլոր տարազները եւ
կապկոթիւնները, հայ արարողութեան խա-
փանի՛չ կ'ըլլան կոր... Կը հարցնեմ՝ ձեր ու-
նեցած գաղղիական անունները, ձեր գաւա-
կաց լատին մայրապետներու կամ կրօնաւոր-
ներու քով տրուած դատարարակութիւնը ո՞ր-
քան ծխափութութիւն է... եւ նոր տոմարը
լատին կ'ընէ եղեր. ասոնք պարզապէս միշ-
միտները խաբելով իշխանութեան զէմ՝ զըր-
գուելու խօսքեր, գաւաճանութիւններ, սու-
տեր են... Կը հարցնեմ դարձեալ, ոյն ա-
րեւելածէս բոլոր կաթողիկէ ազգերը, զորս
ի վեր անդր յիշեցի, նոր տոմարը ընդունած
ըլլալով, իրենց ծէսը փոխեցին կամ փոքու-
իւրի վնասեցին: Կը հարցնեմ երրորդ, Հայ
Կաթողիկէ տաճարումէկ թեմեր եւ եօթը փո-
խանորդութիւններ նոր տոմարը ի վաղուց
գործածելով, հայ ծէսի եւ արարողութեանց
մէջ ի՞նչ փոխեցին. եւ հիմա ցոյց տուէ՛ք
մեզի թէ ի՞նչպէս լատին եղանք, ի՞նչ փո-
խեցինք արարողութեանց մէջ. ցոյց տուէ՛ք
խնդրեմ: Տօները եւ ծխապատարութիւննե-
րը սասնեցեք որ առաջ ընելը, արարողու-
թեանց պահպանման կամ փոփոխութեան
հետ ի՞նչ առնչութիւն ունի, ըսէ՛ք, էֆէն-
սիներ, ըսէ՛ք... Ասոնք են ահա՛ ազգա-
սեռները, որոնք իրենց կիրքերը աւելի կը
սիրեն քան թէ ազգը. որոնք սուտ ազգա-
սիրութեամբ կ'ուրանան ուղիղը: Կաթողիկէ
Հայն է ճշմարիտ ազգասէրը. նա՛ է որ փըր-
կեց հայ լեզուն ու մատենագրութիւնը. նա՛
է որ Եւրոպայի ծանօթացուց զՀայը եւ անոր
բարեմտանութիւնները եւ սիրելի ըրաւ, մինչդեռ
էջմիածնականք վերջին ժամանակներս ատելի
ըրին զայն. Կաթողիկէ Հայն է որ կորովի
կերպով պաշտպանեց Հայուն իրաւունքը գո-
յութեան, նա՛ է որ անդրդուելիօրէն ան-
վթար պահպանեց Ս. Կրօնքը, ծէսն ու ա-
րարողութիւնները. նա՛ է որ վերջին Հարս-
տութեան միակ նեցուկը եղաւ. եւ դեռ այ-
սօր իր փոքրամասնութեամբ հանդերձ, իբր
գիտուն եւ գիտակից ու կրթեալ՝ ճշմարիտ
ներկայացուցիչն է հայ ազգին. այս իմաս-
տով է որ նոյն իսկ թուրքն ալ թափանցե-
լով այդ տարբերութեան, հնարած է բնորո-

չական սա վերադիրները՝ ինճե էրմէնի (Կաթողիկէ), գապա էրմէնի (Էջմիածնական)։ Ահա այսպէս ալ Կաթողիկէ Հայն է ճշմարիտ պահապան հայ արարողութիւններու։ Նորէն պահպանձումն, տգէտներու, զրպարտողներու ձրի բամբասողներու վայել։ — Բայց այսչափը ամօթ է։... Ընդվզելով, դարձեալ՝

Ըսին. «Մենք մեր հայրերէն ինչ որ տեսնեմք ազգային՝ զայն կը պահենք»։ — Հիմա՛, այլեւս յայտնի է որ փիլիսոփայ էք եղեր, ես չգիտցայ, ներեցէք, բայց չգիտնալու իրաւունք ունէի. դի այս տրամաբանութիւնը Զուլուներու, Հօթէնթօթներու մասնազիտութիւնն է, որոնք բարեկարգութեան, յառաջդիմութեան գաղափար չունին։ Բարբարոս տրամաբանութիւն կամ լաւ եւս անտրամաբանութիւն է այդ։ Այս տեսակ բան ըսողը պէտք է գոնէ շալվար հագնի, թրամվայ կամ շոգենաւ կամ շոգեկառք երբեք չնստի. հեռագիր բնաւ չտայ չընդունի. լիսէ համալսարան չերթայ. նոր փողոցներու մէջ չպտտի. եւայլն, եւայլն։ Բայց զայս եւս պէտք է դիտեմ թէ նոր տոմարը իրրեւ ազգային ցոյց տուողը աշխարհէս լուր չունի։ Խնչ բարձր տգիտութիւն։ Նոր տոմարը Հրեոյմեական է բայց Կաթողիկէ. զի Ս. Քահանայապետի մը գործ է. Հին տոմարն ալ Հրեոյմեական է, բայց Հեթանոսական, զի Հրեոյմեացի Յուլիոս Կայսեր գործ է. ուր կը մնայ հոս հայկականը, ազգայինը, եւայլն. եւայլն։...

Ըսին. «Նոր տոմարը ՀԱՇՈՒԱԿԱՆ բան է, ուրեմն ԱՇԽԱՐՀԱՅԻՆ. նետեաբար պէտք էր որ ազգին հետ խորհրդակցութեամբ եւ համաձայնութեամբ ընդունուէր»։ — Զարմանալի բան. այս առարկութենէն կը հետեւի որ, Տիեզերական ժողովքներն ալ, — քաւ՝ լիցի, — յանցաւոր եղած են, քանի որ Զատիկ տօնին օրը որոշելու համար այլեւայլ անգամ իրենց հաշուական վիճարանութիւններուն, վճիռներուն, աշխարհականները մասնակից չըլին երբեք։ Բայց գիտէ՞ք թէ ասոր գաղտնիքն ի՞նչ է. որովհետեւ այդ խնդիրները հաշուական ըլլալով աշխարհային եղած չեն ըլլար. քանզի կրօնական-

հաշուական են, քանի որ Եկեղեցւոյ տօներու վրայ է խնդիրը. զոր միայն բացառաբար Հոգեւոր իշխանութիւնը կարող է որոշել ու սահմանել։ Նոր տոմարն ալ ճիշդ նոյնպէս է. վասնզի Միունդը, Զատիկը, եւայլն. եւայլն. 13 օր վերջը տօնելը սխալ է, այն սրբազան յիշատակութիւններուն օրը անցած ըլլալուն համար. ուստի այդ սխալը չտիկելը միայն Եկեղեցական իշխանութեան կը պատկանի։

Ըսին. «Միայն Գաղասացիք ու ծրուած Կաթողիկէներ ընդունեցան»։ — Նախ եւ առաջ շատ սխալ է այդ նախադասութիւնը. զի 11 Թեմեր եւ 7 Փոխանորդութիւնք արդէն ընդունած էին որոնք ամէնքը Գաղասացի չեն. ապա ի Կ. Պոլիս ալ հակառակորդք արտօնող կարգի փոքրամիւ ըլլալով. ընդունողներուն այսինքն՝ Հոգեւոր իշխանութեան հաղանդողներուն մեծագոյն մասը Պոլսեցի է։ Դիտեցէք նաեւ թէ նոյնիսկ հակառակորդաց մէջ գաւառացի շատ կայ, սկսելով Վարչական ըսուած ժողովէն։ Եւ նոյն իսկ ցուցաբար սրբապիղծներու մէջ որչափ չարափառք... Այսու հանդերձ, որքան մեծ գովասանք է հնազանդ ժողովուրդին համար Գաղասացի անուանակոչութիւնը. գիտէ՞ք՝ ինչու. քանզի երբ Էջմիածնականներն ահաւոր կերպով կը հալածէին Կաթողիկէները, զանոնք ընդհանրապէս կ'անուանէին Գաղասացի, ծրուած Կաթողիկ, պոչը կտրած, եւլն. ասոնք կ'օրհնէին համար եղած նախատինքներ ըլլալով, ՓԱՌՔ են, հասկցա՞ք. լսեցէ՞ք Առաքելապետական վճիռը. «Իսկ եթէ նախաժիցիք եւս վասն անուանն Քրիստոսի, երանելի էք, զի փառացն եւ զօրութեան անուն է։ Մի՛ ոք ի ձեռք չարչարեսցի իբրեւ զապանող, կամ իբրեւ զգող, կամ իբրեւ զչարագործ, կամ իբրեւ զօրարեստուչ։ Ապա եթէ իբրեւ զՔրիստոսեայ, մի՛ ինչ ամաչեսցէ. այլ փառաւոր առնիցէ զԱսուած անուամբս այսուիկ» (Ա. Պետ. Դ. 14-16)։ — «Յիմարն Ասուծոյ իմաստագոյն է քան զմարդիկ» (Ա. Կոր. Ա. 25)։ Յայտնի կ'երեւի ուրիշն որ ձեր ըրածն ալ կրօնական հալածանք է՝ ճիշդ ինչպէս կ'ընէին Էջմիածնականք. «Ապա ուրեմն վկայեք զանձանց՝ եթէ որդիք էք այնու-

ցիք որ կոսորեին զմարգարեան: Եւ դաւ ցիք զչափ հարցն ձերոց» (Մթ. ԻԳ. 31, 32):— Սակայն՝ լի զայրոյթով եւ կցկոտուր բառերով, վերջապէս՝

Ըսին. «Ձեք ուզե՛ր, վեսե՛լա՛ւ, քանի որ Թերզեանէն կուգայ այս բարիքը»:— A la bonne heure! Հո՛ւսկ ուրեմն դուրս կուտաք թոյնը: Եւ այս տեսակ վատ յամառութեան, քէնի ու վրէժինդութեան համար կ'ընդունիք ըլլալ տպէտ, յետադէմ, անտրամաբան, եւրոպացւոց ծաղր ու ծանակ, եւ չէք ուզեր ընդունիլ Նոր Տոմարը. ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ!!: Չարմա՛նք եւ ցաւ: Գիտե՛ք Փարիսեցւոց յամառութիւնը. մարդ կ'ապշի կարգալով, Ձ. Օ. ի ծնէ կուրին պատուութիւնը. (Յովհ. Թ.) «Եթե ոք խոստովանեցէ զնա Քրիստոս, ի բաց կացցէ ի ժողովրդեան... մեք գիտեմք զի այրն այն մեղաւոր է. դո՛ւ լիջիր նորա աւակներս. մեք Մովսէսի աւակներս եմք, եւ դու վարդապետս լինիս մեր. եւ հանին զնա արտախ»: Եւ կը կոխուէք դարձեալ եւ կը բռնաբարէք ու կը յափշտակէք Իշխանութիւնը, անյարիր եւ ծաղրելի Յայտարարութիւններ հրատարակելով. աղմուկներ հանելով յարձակումներ կարգադրելով. Եկեղեցիները պղծելով՝ հայհոյութիւններով, սրբապղծութիւններով, Ամանասուրը Հաղորդութեան առջեւ, հրեշտակներն իսկ արամեցնելով, մինչդեռ «Եւ դեւ հաւատան եւ սարսիմ» Յակ. Բ. 19): Մինչեւ ո՛ւր տարիք, եղբա՛րք, յանդգնութիւնը. ասո՞նք են մի՛թէ աղգին իրաւունքները, ասո՞նք են աղատութեան պտուղները. Առաքեալը կ'ըսէ. «Իբրեւ զազաս լինել, եւ մի՛ իբրեւ պատուակ չարութեան ունել զազատութիւնն, այլ իբրեւ Աստուծոյ ծառայք» (Ա. Պետր. Բ. 16): Ձուշացէ՛ք, չըլլայ թէ անաւոր կերպով վրէժինդիւր ըլլայ Տէր. «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի. եւ դուք արարեք զղա այս աւագակաց» (Մատթ. ԻԱ. 13): Ուրեմն ազգին եւ ձեր փրկութեանը համար պէտք է նորոգուիք ի սիրտ եւ ի հոգի. ա՛յս թող ըլլայ Նոր Տոմարին հոգեւոր նշանակութիւնն ու փրկարար արդիւնքը... «Եղիշի՛ք նոր զանգուս ծ... Այսուհետեւ արացուք տոն, մի՛ ի խմորն հին եւ մի՛ ի խմորն չարութեան եւ անզգամութեան, այլ յանխմորս տոնութեան եւ նւարտութեան» (Ա. Գոր. Ե. 7, 8):

ԿԱԹՈՂԻԿԷ

ՕՐՄԱՆԵՄՆԻ

» ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ, ԳԻՐԲԸ (1)

Գ

Յարգ վերուծուած Նախաբանէ եւ Յառաջաբանէ ետքը բաւական հասկցուելու էր Օրմանեանի գրքին նպատակը. երբ հեղինակ մը ուրիշի գրուածքն իրրեւ յառաջաբան իր գրքին՝ կը հիւրընկալէ՝ յայտնապէս իւրացուցած կ'ըլլայ անոր գաղափարներն եւ հաստատած թէ նա իր միտքն, գիտումն ու նշապատակը ճշտօրէն բացատրած ըլլայ: Եւ այսպէս կարծելու ամէն իրաւունք ունինք Օրմանեանի մասին՝ քանի որ նա ո՛ր եւ է վերապահում, ո՛ր եւ է գիտողութիւն չընէր Bareilles Betrandի յառաջաբանի մասին: Այսու հանդերձ հարկն կը զգայ երրորդ յառաջաբանի պէս ներածում մը ընել՝ «Ի՞նչ է մեր նպատակը» վերնագրով (էջ. 19):

Հայոց Եկեղեցին իւր իսկական տեսակետէն նկատել, անոր բնութիւնը նւարտութեամբ բացատրել, օտարներուն հաւատարմութեամբ ծանօթացնել, անոր նկատմամբ տարածուած տարածայնութիւնները պարզել... Այս էր մեծ նպատակն Նախաբանին սկիզբէն... Սակայն անով գոհ չըլլար հոս. իր ջատագովին խօսքէն խրախուսուած թէ Հայը համերաշխութեան գործին արգելքներ յարուցանելու միտք չունենալով՝ աշխարհականացուցիչ յեղափոխութեան կարապետն ըլլալու ընդունակ Եկեղեցի մը ունի, որուն սկզբունքներով կրնան բաժանման միջնորդները իյնալ, Օրմանեան կը յանդգնի հրատարակել թէ իր Եկեղեցւոյ զկզրունքներն արժանի են Բրիտանիոյ թեան ընդհանրական միութեան հիմնական նկատուելու (էջ 20), այն միութեան անշուշտ որուն մեծ առաքեալն զինքն կը կարծէ: Պարագան չէ՞ արդեօք գործի առակը յիշեցնելու...

Այս խոշոր յայտարարութեան չեկած՝ կ'ուզէ նախ փողաքշել կրօնատէր ականջներ, որոնք գուցէ վիրաւորուած ըլլան նա-

(1) Տես թիւ 70, էջ 660:

խորդ յայտարարութիւններով եւ այսպէս անվտանգութեան անխորժ շեշտ մը պահած ըլլան իր պատմութեան մասին . կ'ուզէ մոռցնել այդ տգեղ ու աննպաստ տպաւորութիւնը նախ կրօնասիրական բացատրութիւններով եւ յետոյ մեծագոյ յայտարարութեան շառաչով . . . Խեղճ Հայ , որքան դիւրին է խաբել զքեզ անպատուելով զքեզ գովեստներու մէջ , մեռցնել նոյն իսկ պատուելով . . . Բանի՛ քանի՛ ջատագովներու պիտի կարենար ըսել Հայոց հարազատ Եկեղեցին «Յուդա՛ , հաւթուրելով մասնես զիս» . . . Պէտք կը զգայ ուրեմն Օրմանեան խոստովանելու «Թէ Եկեղեցին ՏԱԿԱԻԻՆ ամբողջապէս կը պահէ իւր գոյութիւնը , ինչպէս իւր ազդեցութիւնն ալ , հակառակ այն ծանր հարուածներու , զորս նոր հոգւով գործողներ կարծած են անոր հասցնել» (էջ 19) : Այսուհանդերձ չի կրնար կեղծել զաղտնի թերահաւատութիւնն եւ կը չափաւորէ իր խոստովանութեան համարձակութիւնը տակաւին բառով , զորն կը կրկնէ քիչ վար : Մանաւանդ աւելի բացէն կը մատնէ այդ զգացումը երբ կը հաստատէ թէ «Վարդապետութեան ինչ ինչ կէտեր իբր անհեղի նկատուած են , պատմական ինչ ինչ եղելութիւններ իբրեւ առասպելներ մեկ կողմ դրուած են» : Եթէ այդ կէտերը ստուգապէս վարդապետական կէտեր են , զորս հրամանակարգ վարդապետութիւն կ'անուանենք , անոնք չեն կրնար անտեղի նկատուած ըլլալ . նոյնպէս պատմական ինչ ինչ եղելութիւններ եթէ իրօք եղելութիւններ են՝ չեն կրնար իբրեւ առասպել մէկ կողմ դրուած ըլլալ : Եթէ վարդապետական կէտերու մասին բողոքականութեան ըրածին է որ կ'սկնարկէ՝ ըստ որում նա հաւատոյ հանգանակը ուղածին պէս կրճատած է , եւ եղելութեանց մասին ալ բանապաշտ քննադատութեան գործին՝ որ կը մերժէ ու կը վտարէ պատմութենէ ինչ որ գերբնական է , անշուշտ իրաւունք տրուելիք գործեր չեն ատոնք : Եւ Օրմանեան կրօնքի ազդեցութիւնը ճանչնալու ատեն զգուշանալու էր անկարողութիւն մը վերագրել Եկեղեցւոյ՝ սուտանուն գիտութեան ու աւերիչ քննադատութեան դէմ իր

ինչ ինչ վարդապետական կէտերն ու եղելութիւններն պաշտպանելու : Ո՛չ , Եկեղեցին երբէք տեղի տուած չէ իր հաւատոյ մասանց մէջ գիտութեան ու քննադատութեան յարձակումներու առջեւ , մանաւանդ գիտութիւն եւ քննադատութիւն գործածած է յաղթական կերպով ցոլացնելու իր ճշմարտութիւնը բարձրագիտակ լապտերի պէս ի ահա համօրէն աշխարհի : Բայց այս զօրեղ ու Աստուածային խոստմանց վրայ դժոխքի դէմ կռուուցուած Եկեղեցին՝ անշուշտ Օրմանեանի Հայոց Եկեղեցին չէ : Այո՛ , «Մատուռական զարգացման ձգտումներն ալ , քաղաքական եւ պետական կեանքներն ալ , պատմութեան են նկատուած առնել այն ուժը զոր կրօնական բարձրագոյններ տակաւին հոգիներու վրայ կը ներգործեն» (էջ 19) : Ո՛չ միայն կը ներգործեն այլ եւ ունին՝ ոգիներու ենթակայական տպաւորութիւնէ անկախօրէն , ո՛չ միայն տակաւին՝ այլ ցմիշտ , քանի որ կրօնական բարձրագոյններն յեցած են Աստուծոյ վրայ , որ հիմն է ամէն իրականութեան եւ ճշմարտութեան : Եւ ո՞ր մի Եկեղեցւոյ շնորհիւ է որ հաւատքի այդ ազդեցութիւնը կը պահուի . ո՞ր մի Եկեղեցին է , որ զկրօնք եւ ամէն գերբնականութիւն մերժող դրութեանց կը ճակատի առանց վախճալու գիտութիւնէ եւ զարգացումի ամենամոտեկ ձգտումներէ . որ մանաւանդ հրապարակաւ ճշմարտանուն գիտութիւնն եւ ճշմարիտ զարգացումն իրեն տարածման ու փառաւորութեան պայման կը նկատէ . որ ամենամեծ դպրոցն է եղած ամէն դարու մէջ ամէն գիտութեանց ու ամենազօրեղ գործին զարգացման ու քաղաքականացման : Անշուշտ էջմիածնական Եկեղեցին չէ , ուր չենք գիտեր տգիտութիւնն թէ անկարողութիւնն աւելի ողբալ :

Անհաւատալի բան . կը համարձակի Օրմանեան կարծել որ իւր Եկեղեցին idéal Եկեղեցի ըլլայ այն աստիճանի որ «Անոր բարձրագոյններն արժանի են իբր հիմնական նկատելի այն գաղափարական մեծ նրպասակին , որ է Քրիստոսեկեղեցեան միութիւնն ու պարզութիւնը» (էջ 20) : Թէ չարութեամբ ըսուած չըլլար՝ հեզութիւն մը պիտի

կարծէինք: Եկեղեցի մը որ քայքայուած է ու կազմալուծուած, յորում անիշխանակա- նութիւնը կը տիրէ, յորում անհատական շա- հերն իրաւունքի եւ օրէնքի տեղ կրնան անց- նիլ, յորում ամէն կարգ, հաւատալիք, կը- րօնական պարտք քմահաճոյից ձգուած են. Եկեղեցի մը խրամատուած, անկերպ ու ան- կերպարան, որ անկրօնութեան ու կղերա- մարտութեան մէջ կողմանէ եւ միւս կող- մանէ աւանդական ամենածայրայեղ հետեւո- ղութեան եղբներու մէջ կը տարուբերի, որ իր ծագումէն, իր հայրերու հաւատքէն հե- ոացած՝ նոր դրութիւններէն որ մէկը իւրա- ցնէ չգիտեր. Եկեղեցի մը մէկ խօսքով, ու- ռուն գլուխը Գերթողահօր ողբը կարդալու ժամանակը եկած է, idéal Եկեղեցին կ'ըլլայ եւ տիեզերատարած Եկեղեցւոյ հիմնակէտ ընծայելու սկզբունքներ կ'ունենայ: Եթէ զՀայ Եկեղեցին իր նախկին, հին ձեւին մէջ կ'ուզէ նկատել՝ այն ինքիւրմէ չէ ունեցած եւ չունի ո՛չ հաւատք, ո՛չ ծէս, ո՛չ արարողա- կան սարքեր, նոյն իսկ շքեղ շարականներն ու աղօթքներն՝ հետքն ունին հետեւողու- թեան եւ ընդօրինակութեան. ուրիշէ, օ- տարէ, յԱրեւմտից է իր ի՛ հաւատս ծը- նունդն, իսկ եթէ կ'ուզէ նկատել նոր՝ վեր- ջին սկզբունքներու թուլութեանը մէջ՝ ա- նոր սկզբունքներն ալ իրմէ չեն, արեւմուտ- քի միծ աղանդէն՝ բողոքականութենէ են. ազատամտութիւն, կրօնական թուլատրու- թիւն, ամէն կրօնք (Կաթողիկէութենէ զատ) հաւասարապէս ընդունելի նկատելու քսկղ- բունքը, եւ ասով դէպ ի անտարբերութիւն, անտարբերութենէ դէպ ի թերահաւատութիւն, ասկից դէպի անկրօնութիւն յառաջացումը շատ վերջին դրութիւն է եւ քարոզուած ու մուծուած է վերջին տարիներու: Հետեւաբար այդ դրութիւնն ու սկզբունքն իսկ՝ իւրը ըսելու հաճաքն չի կրնար ունենալ Օրման- հանի Եկեղեցին:

(Շարունակելի)

ՄԵՆՈՒԹԻՒՆ Ս. ԱՌԵՏԱՐԱՆԻ

ՅԻՍՈՒՍԻ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Բ

1. Մարիամու Կուսին Ս. Յովսէփայ եւս ամուսնութիւնը: 2. Փրկին յղորիւնը, Ծնունդն ու ամուսնակոչութիւնը:

(Մատ. Ա. — 18—25)

(Շար.)

9. Տիրջ Հրեշտակը նախ կը կոչէ զՅովսէփ յանուանէ եւ մակդիր կուտայ անոր՝ «Որդի Դաւթի». քանզի այն արքայական ցեղին, որուն շառաւիղն էր Յովսէփ, ամենամեծ դէպքին, ակնկալութեան, փա- ոաց աւետիսը կը բերէր, որ առ դուրս էր եւ Յով- սէփայ այնքան մօտիկ, — Մեսիական աւետիսը, որ խնդութեամբ պիտի լեցնէր զՅովսէփ «Նախ վաղվա- դակի յիշեցուցանէ նմա զԴաւիթ, ուսի՛ Բրիստոն էր յիմելոց, եւ անուամբ նախնեացն հանէ զխոռովութիւնն ի մեացն, եւ զաւետիսն՝ որ առ ամենայն ազգն եղեն, յիշեցոյց» (Ուկ. Ճ. Դ.): Ապա կը սրտապնդէ զանի- կա, ըսելով. «Մի՛ վախնար» Աստուծոյ օրինաց դէմ գործելու. քովդ առնով զՄարիամ որ քու հարսդ է:

10. Ասոր պատճառը՝ մեկնէ երկնաւոր Աւե- տաբերը, որ հաւանաբար պիտի ըլլայ Գարբէլ, Մար- գեղութեան Հրեշտակը (Հմմ. Ղուկ. Ա. 49 եւ 26), որ նոյնքան ուրախացած էր Մարգեղութեան խոր- հըրդոյն, որուն յառաջին իսկ վայրկիւնի երկրպագե- ցին խոնարհութեամբ գունդք անմահ գուարճիւնը, քանզի Մարիամու յղացած գուարճը պտուղ էր Հոգ- ւոյն Սրբոյ: Ղուկասու մէջ (Ա. 35—36) Աւետաբերը բտած էր Մարիամու թէ «Հոգին Սուրբ պիտի գայ ի քեզ, եւ Բարձրելոյն զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քու վրադ»: Թէեւ Մարգեղութիւնը Ս. Երբորդութեան երեք Անձերուն ալ միանդամայն գործողութիւնն է առ առաքմ, սակայն անոր ի Մարիամ Կոյս ներգոր- ծութիւնը աւելի կը վերադրուի Ս. Հոգւոյն, զի նա է զլիաւորաբար սէր, բարութիւն եւ շնորհ Աստուծոյ, եւ Մարգեղութեան մէջ ասնք աւելի կը փայլին «Ձի այնպէս սիրեց Աստուած զաշխարհ, մինչեւ իր Միածին Որդին տուաւ» (Յովհ. Գ. 46). Ս. Թովմաս կ'ուսուցանէ. 1. Հոգւոյն Սրբոյ սէրէն միայն, ա- ուանց մարդիկներու արժանեաց, կատարուեցաւ Բա- նին Մարգեղութիւնը: 2. Հոգւոյն Սրբոյ շնորհքէն յղացաւ այն մարդն որ Քրիստոս է, առանց իր կան- իաւորաց արժանեաց: «Այն շնորհքով մարդս իր հա-ւատքին սկիզբէն կ'ըլլայ Քրիստոսեայ, որ շնորհքով այն մարդը իւր սկիզբէն եղաւ Քրիստոս. միեւնոյն

Հոգիէն նա վերստին կը ծնանի (Յովհ. Գ. 5, 7), յորմէ տա ծնաւ. միեւնոյն Հոգւով ի մեզ կ'ըլլայ թողութիւն մեղաց, որ Հոգւով եղաւ որ նա չունեցաւ բնաւ մեղք» (Ս. Օգոստ.): 3. Ինչպէս Ադամէն սերեալք անպատճառ մեղաւոր կը ծնանին, այսպէս Քրիստոս ի Հոգւոյն Սրբոյ սերեալ, ընտելեամբ անմեղ է. սուրբ Հոգին ամենայն լրութեամբն հանգեաւ ի Քրիստոս, որքան ընդունակ է ստեղծուած մը, և զայն յինքն փոխարկեց. հետեւաբար Քրիստոսի մարդկութիւնը Հոգւոյն Սրբոյ ամենաչքնաղ գործն եղաւ:

41. Բանբեր հրեշտակը շարունակելով իր հեռապի տեսարանները, կ'ըսէ. Ս. Յովսէփի. «Մարիամ՝ քու կոյս հարսդ զուակ մը պիտի ծնանի: Ուրեմն Մարիամ՝ մայր է Քրիստոսի, ճշմարիտ և բնական. և այս երկու բանով կ'ըմբերանի հայհայտին Նետտոր և այլք «Որ ասեմն եթէ իբրեւ լնդ ցնցուղ ինչ էանց Քրիստոս: Զի եթէ այնպէս էր. զի՞նչ պէտք արգանդին լին, կամ զի՞նչ հաղորդութիւն ունէր ընդ մեզ... զիմոց էր յարմատն Յետեսալ, կամ զիմոց որդի մարդոյ, եւ որպէս մայր Մարիամ, եւ կամ զիմոց ի զուակէ Գաւրի, կամ զիմոց զկերպարանս ծառայի էառ, եւ որպէս Բանն մարմին եղեւ, եւ ընդէր Հոգւոյնցն զրէթէ «Քոռոց Քրիստոս քս մարմնոյ, որ է ի վերայ ասեմայնի Աստուած՝ օրհնելով յաւիտեանս» (Ոսկ. ձ. Գ.):

